**104**. Հատուած(Fragment) Տ. Խաչիկ ծ. վարդապետի, մագաղաթ, կտրած Գանձասարի մի Աստուածաշունչի ձեռագրից։ ԳԻՐ. Գեղեցիկ, մանր բոլորգիր.։ ՍՏԱՑՈՂ. Յովհաննէս եպիսկոպոս, արքայեղբայր, ստացողի պատկերով. եպիսկոպոսական զգեստաւորութեամբ։ ԺԱՄԱՆԱԿ. ԺԳ. դարու երկրորդ կիսում, 1293-ից առաջ։

Բնագիրը պատկերի հետ $12\frac{1}{2}\times8,8$ սմ. մեր նկարը $9\frac{1}{2}\times5,6$ սմ.։

**105. 106. 107**. Մատ. Ս. էջմ. № 156/179 (Կար. 150). Աստուածաշունչ հին և նոր Կտակարանաց. նուրբ և ազնիւ և փափուկ, մագաղաթ, $23\times15\frac{1}{2}$ սմ. 578 թերթ։ ԳԻՐ. Փոքրատեսակ, ազնիւ բոլորգիր, երկսիւնեան $19,3\times6$ սմ.։ ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ. Ստեփաննոս Գոյներիցանց Գէորգ Լամբրոնացու աշակերտը, ժամանակակից արհեստակիցների կողմից «անհաս գրիչ» կոչուած. (Թումաս գրիչ Երուս. Ս. Յակոբ. մատ. № 888 ), «այն որ լի էր և պատարուն յարհեստ գրչութեան եւ ընդ ընտւս հաչակեալ» (Ստեփաննոս գրիչ «մականուն Յերկայն կոչեցեալ», 1321 թուին. Թորոս Աղբար. Սրուանձտեանցի. եր. 345)։ ԺԱՄԱՆԱԿ 1292 թ. Փրկչ., Հայոց ՉԽԱ։ տես նկարը Տախտ, որ գրչի յիշատակարանն է։

Ծանօթ. Գրքերի սկզբնաւորութիւնը, վերնագիրները կարմիր, միջին կամ փոքր երկաթագրով, երբեմն էլ բոլորգրով։ Տների գլխատառերը նոյնպէս կարմրագիր։

Լուսանկարուած են. ա) 527ա. բուն ձեռագրից, բնագրի և մեր նկարի մեծութիւնը նոյն, $11\times5\frac{1}{2}$ սմ. առաջին տողը։ բ) 526բ. Գրչի գլխաւոր յիշատակարանը աւելի փոքր գրով, քան Ջեռագրի գրչութիւնը, բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ, $11\frac{1}{2}\times6$ սմ. առաջին տողը։ գ) 575բ. խիստ մանր, բայց գեղեցիկ, կանոնաւոր և մաքուր բոլորգրով, որ գրչի մեծ հմտութիւնն ու կարողութիւնն է ապացուցանում. բնագիրը $8,6\times12,1$ սմ., մեր նկարը $8,5\times11,9$ սմ., գրեթէ նոյն մեծութեամբ։

**108. 109** Մատ Ս. էջմ. № Գ. 22/2848 Աւետարան, նկարազարդ, թուղթ $32\frac{1}{2}\times24\frac{1}{2}$ սմ., 318 թերթ։ ԳԻՐ բոլորգիր, երկսիւնեան $21\times6$ առանց ներքևի ծանօթութեանց։ ԳՐԻՉՆ է. և Նկարիչը Մոմիկ սարկաւագ (նաև քանդակագործ. տես Ալիշան. Սիսական)։ ՍՏԱՑՈՂՔ Յովհաննէս և Թադէոս քահանայ եղբայրներ (տես. նկարը Տախտ. ՀԳ ):«Ի պէտս մաքրաբնակ անապատին և ցանկալի մենանոցին, ի բնիկ բնակութեանն իւրեանց Ուռուքարոյ»։ «Եւ եղին յարկեղ ս՛ր եկեղեցւոյն իւրեանց սրբոյն Գէորգայ»։ ՏԵՂ.։ «Ի նահանգիս Սիւնեաց, ի գաւառիս Վայոյձոր, ի փառաւոր և ի հոյակապ և ի հռչակաւոր մենաստանիս, Նորավանս կոչեց(եղ)ոյ յարքունապատիւ գահոյս հայրապետութե՜... և վերադիտողի առնս Սիւնեաց Տ՜ն Տ՜ր Ստեփաննոսի, առաջնորդի ս՛ր ուխտիս։ ԺԱՄԱՆԱԿ. 1292 թ. Փրկչական. «Ի նոր շրջագայութե ս ՄԹ, ի չորեքտասան յոբէլինիս ԽԱ թվոց յաւելմամբ. և ի ԽԹ ընտիրքաինիս Չ իւ անեցեալ. յեւթնեկ հարիւրիս և ի քառեկ Ժ եկիս, միակիւ պատեալ»։

Նկարուած է ա) 148բ. յիշատակարան, կարմրադեղով. բնագիրը $21\frac{1}{2}\times15$, մեր նկարը $13,1\times8$ սմ.։ բ) Վերջին յիշատակարանից. 317բ. $22\times6,1$, մեր նկարը $12,6\times3\frac{1}{2}$ սմ.։